

ԲԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ հիմակուան աւտենս քանի վանորայք կան շէն ու բնակած . քանի են ընդհանրապէս բնակչաց թիւը . ինչ կերպ կ'ըլլայ կառավարութիւննին . վանականաց կրօնական և ուսումնական յառաջադիմութիւննին ինչ վիճակի մէջ է :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Պատերազմ գորտերու և մկանց :

ԹԻԳԻՏ մարդկան պարզութեան ժամանակը ու գիտութեանց սկիզբը եղած է առակաց գիւտը , բայց չէ թէ միայն պարզամիտ մարդկանց ու տղայոց օգտակար են , այլ և քաղաքական մարդկութեան ալ . որ հայլի մը վրայ նկարուածի պէս կը տեսնուի առակաց օրինակներու մէջ իր բարոյական պատկերը . ու իրմէ օտար են թակախներով խաբուելով ու նորութեամբը զուարճանալով կը խրատուի ու կ'ուղղէ զինքը շատ անգամ առանց իմանալու : Եւ թէ ինչ պէս զօրաւոր է առակը ու ազդու , կը տեսնենք Վստուածաշունչ գրոց մէջ ալ , ինչպէս որ կարճ առակով մը (Յովաթամ կ'ողջայ եղբարցը կոտորածը , ու սպառնալիքով մը կը գուշակէ Ղբիմեւեբայ բռնակալութիւնը : Պզտի առակով մը Ղգրիպպաս Հռովմայ ժողովրդեան ահագին խռովութիւնը ու ապստամբութիւնը մէկ վայրկենի մէջ կը խաղաղցունէ . առակով Լսուբոս բոլոր Յունաց խրատիչ մը ըլլալէն ետքը , բոլոր մարդկութեան ալ դաստիարակ կը սեպուի : Եւ աստիճան յարգ ունեցեր է առակը որ հին քննիչներէն ոմանք հաստատեր են թէ Հոմերոսի Իլիական ու Ոդիսական քերթուածներն ալ առակներ ըլ-

լան . ուր զանազան աստուածոց ու դիւցազանց անունները մարդկային կրքեր ու ձիրքեր նշանակեն , ինչպէս Ղբիլէս Իլիականին մէջ բարկութիւն կամ մարդուս ցասմնական զօրութիւնը , Ղթեհաս խոհական մտաց կառավարութիւնը , որ զինքը կ'ուղէր ուղղել . ասոր նման ուրիշ մասերն ալ , և ամբողջ Ոդիսականը : Եւ խորհրդածութիւններով անսրժան չսեպեցինք ու ոչ ալ անվայելուչ Հոմերոսի գորտանց ու մկանց պատերազմը՝ որ իր անուամբը երեւելի եղած է , ուսմիօրէն թարգմանել , ու բարեկենդանի զուարճութեան մը տեղ ընծայել մեր ազգին բանասիրացը : Եւ թէ Հոմերոս առջի դիւցազներգութեանց վախճանը համառօտելով կ'ամփոփէ աս կենդանեաց ծաղրական պատերազմին մէջ . ու միանգամայն կը ցուցնէ՝ թէ ոչինչ պակաս ծիծաղելի են մարդկային կրքերն ալ , և շատ անգամ անոնց վախճանն ալ :

Եւ ԻԳԱՍԱՆՈՒԹԵԱՆՍ սկիզբն կ'աղաչեմ զքեզ գերագոյն Ղրամազգ , որ Լիւկոն լեռը բնակող Ղուսաները զրկես ինծի օգնական . վասն զի ես ինքիրմէս չեմ կարող համառօտել քաջին Ղրեսի բազմախուով պատերազմը , որ աստուած կ'ըսուի ու աստուածային պատանի :

Եւ աղաչեմ զձեզ ամէնքնիդ ալ որ լաւ միտ դնէք , և բացէք ականջնիդ՝ որ լսէք թէ ինչ պատճառաւ ու ինչպէս մկները մեծ պատերազմ մը ըրին գորտերուն հետ , և մարդկան նմանեցան , ան հին ահաւոր հսկայ մարդկան , ինչպէս կը պատմեն ու կ'երգեն :

Եւ երբ մուկ մը կատուէ մը փախչելիւ ատեն ծարուած՝ արիւն քրտինք մտած՝ լիճը ինջաւ որ ծարաւը անցնէ , ու մեծ փափաքով մը թուշը խութեց ջրին մէջ : Հոն գորտ մը հարցուց իրեն . Հիւրիկ , ո՞վ ես դու և ուստի կու գաս հոս . բարեկամաբար լսէ ինծի ճմարիտը , ո՞վ են քու ծնողքդ , ինչեր ըրեր է քու ցեղդ , բան մի ծածկեր ինծմէ : Եւ որ ճմարտախօս ըլլաս , ինծի բարեկամ կ'ըլլաս , ու զքեզ կը մտցնեմ